53. ՔՍԼԱՆ ՈՒ ՓԽՉՈՆ

Կեղնի էրկու մարդ, քեռի մը, խուարզ մը։ Քեռու անուն Քսլան կէղ-նի, խարզին ալ Փխչո։ Քսլան կելնի կվարձվի մարդու մը մոտ։

Էտ մարդ կըսե—Ես քեզ հետ զրուց կէնիմ, քզի կդնիմ լծկի հետ, իմ տաժին հ'ուր նստավ, հ'ոնի լուծ կէնիս։

Վերջո Քսլան կէլնի կընկնի լծկի հետ, կէրթա։

Կըսե թե.— Իմ տաժին հ'ուր նստավ, հ'ոնի լուծ կէնիս, եղներ հ'իր-կուն էկավ երդկեն իջուս ու շալակ մ'ալ անծերտ փետ բերիս, օր հ'իր-կուն միս էփինք ու կեսօրին ալ քու հաց էկավ, ուտիս ու աման ալ լիք ետ դարձուս։ Եթե կարող իս էդպես էնիս՝ զքզի կբռնիմ, թե կարող չիս՝ զոլ մը կաշի քու պառեկեն կհանիմ։

Էդ անգամին Քսլան կէրթա լուծք։ Կտեսնա օր տաժին գնաց շոր քարի վրա նստավ։ Շիվարավ կայնավ։ Ոչ հարոր կբանի, ոչ բան կբանի։ Կեսօրին ալ հաց էկավ, հաց կերավ, աման դարդկվավ։ Ջարեն կտրավ, աման դարդակ ուղարկեց տուն։ Իրկուն ալ անծերտ փետ չգտավ, եղներ էտուր հ'առեշ, էկավ տուն։

Վերջապես չկրցավ զէտ մարդու խոսքեր կ'ատարեց, հ'իրկուն էկավ տուն, զոլ մի կաշի Քսլանի պառեկեն հանեց։

Քսլան խեղճ քոռ ու փոշման թողեց գնաց ուր խարզի մոտ։ Փխչոն երդում էրեց, էսաց . «Էդ իմ բան ա, ես էրթամ էտ մարդու մոտ ու իմ քեռու հեյֆ հանիմ»։

Փխչոն էլավ էկավ էտ մարդու մոտ, էսաց.—Մշակ չրս բռնի՞։

Էսաց.—Կբռնիմ։

Էգ մարդ ըսավ.— Կարո՞ղ իս զիմ ըսածներ կատարիս։

Ըսավ.— Հա։

Ինչ Քսլանուն ըսեր էր, էտ մարդուն լե էն ըսեց։

Իդ անգամին Փխչոն էլավ, գնաց լուծք։ Տաժին գնաց վըր քարին նստավ։ Փետ մը տաժու պառեկին զարկեց, տաժին գնաց կակուղ տեղ նստավ։ Էնտեղ դրեց լուծք էնեց, մինչև կեսօրին հաց էկավ։

Կեսօրին օր հաց էկավ, զհաց կերավ, խեռի լսողաց ք.... մըշ ուխլին, լենցուց, թիթրե մ՝ ալ դրեց ուխլու բերան, ուղարկեց էկավ տուն։ Մինչև հ՝իրիկուն լուծք էնեց, հ՝իրկուն էկավ զեզներ դրեց փողոցի վրա մորթեց, իր հարորն ալ, լծներն ալ ջարդեց, էրեց անծերտ փետ։ Եզներու գլխներ հ՝երդկեն թալեց, հ՝իրկուն բերեց եզներու քիթ խորեց մըշ հ՝երդին։

Ուր աղեն ըսեց.— Իմ ըսածներ կատարե՞ր իս։

Ըսեց.— Հա։

Գնաց աչքեց օր եզներու գլուխ կտրուկ՝ խորուկ մըշ հ՝երդին։

Էկավ ըսեց.—Ինչու՞ էդպես էրիր իս։

Ըսեց.— Քու ըսածն եմ էրի։ Ինչ օր դու ըսիր էր, զըմեն կատարեր իմ։

Էլ չկարաց Փխչոին բան մը էնեց։

Հ՝իրիկուն մարդու կնիկ Փխչոին ըսեց.—Զէդա աղջիկ տար դուս, շուտ,— ըսեց,—շուեց շուեց, չըշուեց՝ ճղտորես, թալես հ՝առեջ շներուն, հ՝իգաս։

Ու Փխչոն տարեց դուս օտ մի էդիր մեկ օտաց, օտ մի մեկել օտաց, ճվտեց, թալեց շներու հ՝առեջ, էկավ։

Էկավ տուն, հարցուց.—Հ՝ու՞ր է աղջիկ։

Ըսեց.—Էնի-չէնի, չը շուեց, ճղեցի, թալի շներու հ՝առեջ, էկա։

Էդտեղ էդ մարդ ու կնիկ վախեցան Փխչոից, ուզեցին տուն թողնել ու ըլնել։

Գիշեր Փխչոն օր պառկավ, էլան ուրանց գաթա էփեցին, ջվալ մը լենցրցին ու էկան պառկան՝ ուզեցին օր աղոթրան բացվեր, թողնեն ու փախչեն։

Գիշեր օր քնան, Փխչոն էլավ, քակեց ջվալ, զգաթեք հ՝ըմեն թափեց, մտավ մըշ ջըվլին ու զջըվլի բերան կարեց ուր վերեն։ Աղոթրանին էլան, շալկեցին զջվալ ու գացին։

Շոգից Փխչոն շուեց ուր վերեն, հայն ըսեց.—Հայ կնիկ, քու տուն ավիրի, ինչքան եղով իս շինի օր կկաթի իմ վերեն։

Քիչ մը տեղ գացին, օխչրի ճղին ռաստ էկավ, շներ էկան վրը ուրանց, հայն ըսեց.—Կնիկ, խոզե մեր ծուռ Փխչոն հ՚ոդա էղներ, զմըղի շան ձեռնեն ազատեր։

Փխչոն ըսեց.—Ես հ՚ոդա եմ, զձի թալեք։

Ջվալ ձեվեց ու լարեց շներու ետև, ամեկ շուն դհով մա տարավ։

Ըսեց.—Բարե, ես ձեր թարկ կիտա՞մ մինչև օրն ի մահուն։

Ըդ մարդ ու կնիկ հ՚ոդի վախեցան, մարդ ըսավ.—Պառկենք կարմընջի վրա, գիշեր օր Փխչոն էկավ պառկավ, հլոնտինք իտանք մըշ ջրին օր մենք ազատվինք։

Հ՚իրկուն էկան պառկան վրը կտրմնջին։

Փխչոն լը պառկցին մեկ կուշտ։ Գիշեր օր էդ մարդ քնավ, Փխչոն էլավ ասեց.—Կնիկ, կնիկ, էլի, Փխչոն քներ ի, հլոնտինք, տանք մըշ ջրին։

Հլոնտեցին զէտ մարդ, տվին մըշ ջրին։ Վերջո Փխչոն զկնիկ լե հլոնտեց տվեց մըշ ջրին։

Թողեց էկավ քեռի Քսլանի մոտ։

Ըսեց.—Քեռի, զքու հեյֆ առա,— ըսեց,— զքու աղեն տեղով-տնով ընաջինչ էնեցի ու էկա։

Վերջո Քսլոն ըսեց.—Էրթանք գողութեն էնինք, զմեր ապրուստ հանինք։

Էդ անգամ Փխչոն ըսեց.—Քեռի Փխչան, դու գինա՞ս գողութեն էնիս։

Փխչոն ըսեց—Հա՛։

Քսլան ըսեց.—Իմա՞լ իս, էլնիմ ծառի ծեր, լակլկու հավկիթ գողնամ, լակլակ չկռահա։

Քսլան օր էլավ ծառի ծեր, զլակլկու հավկիթ գողցավ, լակլակ չկռահեց։

Փխչոն լա զՔսլանի շլվար Քսլանի վրավեն հանեց, Քսլան չկռահեց։

Էկավ ըսեց.—Խուարզ Փխչո, իմա՞լ զլակլկու հավկիթ գողցա, լակլակ չկռահեց։

Փխչոն լե ըսեց.—Ես իմա՞լ զքու շլվար վրավեդ հանի, դու չկռահեցիր։

Քսլան ըսեց.—Օր հմալ ա, աղեկ ա, էրթանք գողութենի։

Էլան էկան թագավորի խզինեն, օսկի գողցան։

Վերջո թագավոր էլավ տեսավ օր, զխզինեն գողցած ա։ Էլավ խզինի դռան հ՚առեջ յոթ գաղկան հոր մը փորեց, կուպր. լեցուց հ՚ինք։ Վերջո մյուս օրն ալ էկան գողութենի։

Փխչոն ըսեց.— Քեռի Քսլան, դու հ՚առեջ քելա։

Քսլան քելեց հ՚առեջ, պատավ մըշ կպրին։ Փխչոն կոխեց վրը Քսլանին, հ՚ընցավ գնաց, զխզինեն գողցավ։ Զուրի դարձավ էկավ, Քսլան

մըշ կպրին մեռեր էր, բռնեց Քսլանի թև, քաշեց։ Քսլան չէլավ, թև փրթավ, առեց ղթև քաշվավ գնաց։

Լուսուն թագավոր էլավ տեսավ օր մարդ մը մըշ կպրին մեռի, թև հետը չէ։ Էմլա գխղինեն գողցած, տարած։ Թագավորն ալ Բաղլուա թագավորն ա։ Մշու թագավոր հասկցավ, ասեց.— Հազար ափսոս քու թագավորութենին, ի՞նչպես թագավոր մ՝իս, գող մը չկռնաս բռնի։

Էն անգամին էլավ զջանդակ հանեց կպրի մեջեն, դրեց տեղ մը, խարախոլ դրեց, պահեց զէդ ջանդակ։

Ըսեց.—Էդ ջանդրկի տեր եփ ա մանցի պիտի գա, զէդ ջանդակ տանի՝ ու պիտի բռնեմ ղէղա գող։

Փխչոն հասկցավ օր ուր քեռու ջանդակ հանած՝ խարախոլ դրած հ՝առեջ։ Փխչոն էլավ կտրտուկ շորեր հագավ, օլախ մը ընկցուց ուր հ՝առեջ ու էկավ։ Էկավ ուր քեռու ջանդկի մոտ։

Խարախոլ ըսեց.—Դու ի՞նչ մարդ իս։

Փխչոն ըսեց.—Աղքատ իմ, ժողով կէնիմ։

Զփխչոն բռնեցին հ՝ոդի, ծիծղացին, տնազ էրեցին հար հ՝իրիկուն։ Փխչոն հաց կերցուցին, ըսին.—Դու տի մեր մոտ պառկիս։

Փխչոն ըսեց.—Ձեր ջանդակ պիտի գողնա զիմ էջ, ես խեղճ իմ, ախքատ իմ։

Ըսեցին.— Մեռուկ ջանդակ իմա՞լ կգողնա զքու էջ։

Փխչոն ըսեց.— Ձեր քեֆն ա, ձեր լեշ գողնա զիմ էջ, զիմ իշու գին ձենե կառնիմ, ես ախքատ իմ, խեղճ իմ։

Գիշերն օր խարախոլներ քնան, Փխչոն էլավ զջանդակ կապեց վրը օլխուն, օլխու բար տվեց տուն, օլախ առավ գՔսլանի ջանդակ, էկավ տուն։

Փխչոն պառկավ հ՝ոդի, քնավ։ Լուսուն էլավ, լաց, բոռաց.—Ձեր լեշ գողցեր է զիմ էջ։

Ճարահատյալ մանցին, էլան էրկու իրեք օսկի տվին Փխչոին, զՓխչոն ճամբեցին գնաց։ Լուր տարան թագավորին, ըսին՝ վոլա զջանդակ գողցած, տարած ին։

Էդ անգամին թագավորի ախչիկ ըսեց.—Հազար ափսոս քու թագավորութենին, դու չըս կռնա գող մի բռնե։

Էլավ զուր շադրը զարկեց դուս, ըսեց.—Եփ ա մանցի՝ էդ գող պիտի գա, ես զէդ գող պիտի բռնեմ։

Փխչոն հասկցեր էր, էլավ ու էկավ։ Զուր քեռու փրցուկ թև լե էցկեր էր ուր շորերու մեջ։ Գիշեր պառկավ թագավորի ախչկան մոտ, ինչ օր պետք էր էնեց, էլավ ըսեց.—Ես տ՝էնիմ դրսու հաշիվ։

Թագավորի ախչիկ ըսեց.—Չէ, դու իմ մոտեն պիտի չէրթաս հար ի լուս։

Զուր քեռու փրցուկ թև էտու թագավորի ախչկան ձեռ.— Ես չըմ էրթա։ Թագավորի ախչիկ օր բռնեց, ինք թողեց ու փախավ։

Թագավորի ախչիկ գնաց ուր պապուն ըսեց.— Ես մեղա աստծու, գող էկավ, ինչ օր պետքն էր, իմ հետ էնեց ու պրծավ գնաց, ինչ կուզիս էնիս՝ քու կամքն ա։

Մշու թագավոր հասկցավ, օր ինչ օր պետքն էր ուր ախչկան հետ լե էներ էր, ըսեց.—Ամոթ քըզի, քու թագավորութենին, բոլոր թագավորներու անուն լե կոտրեցիր, ի՞նչ թագավոր էղնի օր ըդաքան ժամանակ չկրնա գող մը բռնա։

Ին ամիս օր թըմավ, թագավորի ախչիկ պառկավ ու բերեց տղե մը։ Տարի մը, էրկու մնաց, տղեն էլավ քելեց։ Թագավոր էլավ բոլոր քաղաքացիք քոմեց, ժողովք էնեց։ Փխչոն լա առավ աղվես մը, դրեց ուր ծոց. էկավ։ Սրով զըմեն նստեցուց ու զտղեն թողեց մըչ ուրանց։ Ըսեց.—Որ մարդուց էղնի, պիտի էրթա ընգրա մոտ։

Ու վերջո տղեն խաստ էնեց, գնաց Փխչո մոտ։ Փխչոն ղազվես թաչեց, ժողովուրդ վըր աղվըսուն աչկեցին, Փխչոն առավ զտղեն ու փախավ։

Թագավոր չկարցավ ճար մը էնեց։ Տալալ տվեց բոռալ, ըսեց. «Ես մեղա աստծու, որ օր իմ գողն ա, թըխ հ՝իգա, զիմ ախչիկ լե կիտամ ուրեն, մինակ իմ թախթ ընձի, իմ ունեցածի էրկու բաժին լե կիտամ ուրեն։ Թըխ հ՝իգա հայտնըվի ըսա՝ ես իմ»։

Փխչոն էկավ, ըսեց.—Ես իմ։

Ձախչիկ պսակեց վերեն, ունեցածի էրկու բաժին լե տվեց ուրեն, ըսեց.— Մինակ ընձի մարամ մը կա, կատարես,— ըսեց,—էրթաս Մշու թագավորին բան մը գողնաս, բերես, օր անի զիս շատ պախարակեց։

Փխչոն ըսեց.—Դու սաղ մնաս, ես կրնամ զթագավոր լա գողնամ, բերեմ։

Փխչոն էլավ, ներու փոսթ հագավ, ամեկ մաղեն զանգուլակ մը կախեց, էլավ գնաց։

Էկավ պախտվավ գռան ետև, մինչև սրհաթ տասին։ Թագավորի ժողովք օր փլավ, մնաց թագավոր մինակ։ Էլավ թագավոր զուր տեղ սազեց ու պառկավ։

Փխչոն էկավ կանավ ուր գլխու վերև, զինք թոթվեց։ Օր թոթվեց, զանգուլկներ շխրտաց։ Թագավոր վախեցավ, ըսեց.—Դու ի՞նչ մարդ ես։

Ըսեց.— Ես քու Գաբրիելն եմ, էկեր եմ զքու հոգին կառնեմ։

Ըսեց.—Ըպա ընձի օր մը ժամանակ չըս իտա՞, մինչև ես զիմ խեր տամ ու նոր զիմ հոգին առ։

Ըսեց—Օր մը քրզի ժամանակ։

Թագավոր էլավ լուսուն, զուր խեր տվեց, զուր թարութ սուքեց, օր պառկեր, զուր հոգին առներ։

Մնաց հ՝իրիկուն օր էկավ, Փխշոն էկավ, ուր վերև կանգնավ, ըսեց.—Զքու պատրաստութեն տեսե՞ր ես։

Ըսեց.—Հա։

Ըսեց.— Դե մտի թարութի մեջ, օր զքու հոգին առնեմ։

Դրեց թարութի մեջ ու փարչմեց։ Զվան թալեց, շալկեց ու ընկավ ճամբախ՝ էկավ ուր թագավորին։ Ճամբախ ըսեց.—Զքե կտանիմ տիրոջ հ՝առեջ, ինչ օր ըսիմ, զիմ խոսք պտի էնիս,— ըսեց,—օր ըսիմ՝ իշու պես ղռացի, պտի ղռաս, ըսիմ՝ շան պես վընկզտացի, պտի վընկզտաս, օր աստված քու մեղաց թողութեն իտա։

Թագավոր ըսեց.—Թըղ էղնի։

Առավ էկավ, ուր թագավորի հ՝առեջ գրեց, ըսեց թաբութի միջու՝ իշու պես ղռացի, ղռաց. ըսեց՝ շան պես վընկըզտացի, վընկըզտաց. ըսեց՝ կատվի պես նըվնըվացի, նըվնըվաց։

Վերջո զթաբութի բերան բացեց, թագավոր չիփլախ էլավ նստավ։

Մյուս թագավոր վերուց զյուր յափունջեն, թալեց վերեն, ծածկեց, դրեց ուր կուշտ։

Ըսեց— Ըսա, մեղա աստծու. հ՝որի՞ ձի կմեղադրեր, ինձի դեռ զիմ խզինեն էր կգողներ, ապա ըզքզի օր սազ գողցավ, բերեց։

Նոր Մշու թագավոր էնտեղ մեղա տվեց, ըսեց.—Աշխ էղնի քզի քու գողուն ու զքու թագավորութենին։

Նոր էլավ քոռ ու փոշման թողեց, դառցավ էկավ։

Փխշոն առեց զթագավորի ախչիկ, զուր վայելութեն էնեց։

Անդոնք հասան ուրանց մուրազին։